ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

<<01>> Հունիսի 2023թ. N ՄՊ/198-Ա

ք. Արմավիր

## ԱՐՏԱՎԱԶԴ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ «ՋՐԱՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N181-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 4-ով կետով և 6-րդ կետի 1-ին ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի N259-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-ով կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի 2023 թվականի հունիսի 1-ի զեկուցագիրը.

**ո ր ո շ ու մ  ե մ՝**

1. «Ջրաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող նշանակել «Ջրաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ Արտավազդ Հակոբյանին՝ նրան վերապահելով նույն կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունների կատարումը:
2. Արտավազդ Հակոբյանի աշխատավարձի վճարումն իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 01.06.2023 17:59:25 GMT+4

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ